Հաստատ աղբիւրներից կարող ենք հաղորդել, որ մեր բարեգործների թուի վերայ աւելացաւ և մի նորը. —Կարինի քաղաքացի և Տփխիս վերաբնակած մի յարգելի պարոն, որ իրաւունք չէ տուած մեզ իւր անունը հռչակել, Բոսֆորի ափին իւր ունեցած բրդէ ու հիւսնուլթեան գործարանը, մօտ 40,000 ռուբլի արժողուլթեամբ նուիրեց Կ. Պոլսի Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի որբանոցին այն պայմանով, որ հիւանդանոցի վարչուլթիւնը այդ գործարանը բանեցնելով՝ արդիւնքի մի մասը գործ դնէ իւր որբանոցի պահպանուլթեան վերայ, իսկ մի մասը ամեն տարի յետ պահելով հինգ տարին մի անգամ այդ դրամով որբանոցի սաներից մէկին Եւրոպա ուղարկէ գործարանի մասնագիտուլթեան մէջ կատարելագործուելու համար, որը վերադառնալով պիտի ծառայէ նոյն գործարանում։

Այս նուիրաբերուլթեան մասին պաշտօնապէս հաղորդուած լինելով Կ. Պոլսի Ամեն. Ս. Պատրիարքին՝ տեղւոյն խառն ժողովը շնորհակալուլթեամբ ընդունեց բարեպաշտ նուիրաբերողի առաջարկուլթիւնը և ներկայումս գործարանի յանձնման գործողուլթիւններն է կատարւում։

Եթէ մեզ իրաւունք չէ տրւում հրատարակել այդ պատուական անձի անունը, գոնէ «Լումայ»-ն իւր պարտքն է համարում ցնծուլթեամբ հռչակել մի այնպիսի օրինակելի բարեգործուլթիւն, որի օրինակին կը ցանկայինք որ շատերը հետևէին։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Մենք ստացել ենք «ԱՆԱՀԻՏ» վերնագրովՄի նոր ամսաթերթի հայտարարուլթիւն, որ անցեալ նոյեմբեր ամ-

սից պիտի հրատարակուէր Փարիզում պ. Արշակ Չոբանեանի խմբագրութեամբ։

Պ. Արշակ Չոբանեանը ծանօթ է ազգային բանասիրութեան մէջ իւր ընտիր երկերով, որոնցից Պ. Դուրեանի կենսագրութիւնը տպագրուած է Տփխիս մեր հրատարակչական ընկերութեան ձեռքով։

Շնորհաւորելով պ. Չոբանեանին իւր նոր ձեռնարկութիւնը՝ «Լումայ»-ի խմբագրութիւնը մաղթում է «Անահտին» երկայն կեանք և յաջողութիւն։

— Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ յարգելի գիտնական պ. Նորայր Բիւզանդացին, որի «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» անունով ընդարձակ երկը մամուլի տակ է Տփխիսում և ո՛չ շատ ուշ լոյս պիտի տեսնէ, ձեռնարկում է պատրաստել տպագրութեան համար *Կիրակոս Գանձակեցու* պատմագրութիւնը։

Մի այլ աղբիւրից գիտենք, որ Կիրակոս Գանձակեցին հրատարակութեան համար պատրաստում է նաև ս. Էջմիածնի միաբան բարեշ. Տ. Սահակ վարդ. Տէր Միքայէլեանը։

— Իզմիրեանց կտակի յանձնաժողովը որոշել է իւր ծախքով տպագրել «*Գիրք Թղթոց*» կոչուած կարևոր աշխատութիւնը, որի ձեռագիրը, որքան մեզ յայտնի է, գտնուած է Կ. Պոլսի Անտօնեան միաբանութեան մատենադարանում և արտագրուելով ուղարկուելու է Տբփխիս մամուլին յանձնելու համար։

ՊԵՍՏԱԼՈՑՅՈՒ ՏՈՒՆԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

Բերլինի փողոցներից մէկում բարձրանում է մի մեծ սիրուն տուն։ Ամեն առաւօտ, ժամը 9-ի մօտերին, այդ տան առաջ ժողովւում է երեխաների մի ստուար բազմութիւն։